

## **Սննդի համար նախատեսված գումար SSI ստացողների համար:**

---

*April 2019, Pub#7142.10- Armenian*

2019թ. այն մարդիկ, ովքեր SSI են ստանում, կարող են ամեն ամիս սննդի համար հավելյալ գումար ստանալ: Հավելյալ տեղեկությունների համար կարդացեք ստորև:

### **Ինչպե՞ս պետք է սննդի համար հավելյալ գումար ստանամ:**

Գոյություն ունի մի ծրագիր, որը կոչվում է CalFresh. մարդիկ նախկինում այն կոչում էին Սննդային կտրոններ Food Stamps: 2019թ. հունիսի 1-ից սկսած, այն մարդկանց, ովքեր SSI են ստանում, կթույլատրվի CalFresh ստանալ:

### **Ինչպե՞ս է այն գործում:**

CalFresh-ը Ձեզ ամեն ամիս գումար կտրամադրի՝ այն սննդի համար օգտագործելու նպատակով: Եթե Դուք իրավունք ունենաք, CalFresh-ը Ձեզ հատուկ դեբետային քարտ կտա, որը կոչվում է EBT քարտ, որտեղ կբեռնվեն գումարները: Դուք կարող եք օգտագործել այդ EBT քարտը՝ սնունդ գնելու համար:

### **Իմ SSI գումարը կնվազի՞:**

Ոչ: Եթե Դուք SSI եք ստանում և սկսեք CalFresh ստանալ, Ձեր SSI-ը չպետք է փոխվի: Դա նշանակում է, որ CalFresh-ով Դուք գումար կունենաք Ձեր EBT քարտի վրա, որը կարող եք օգտագործել՝ սնունդ գնելու համար: Հետևաբար, Դուք կարող եք Ձեր SSI չեկի ավելի շատ մասը ծախսել այլ կարևոր բաների համար, օրինակ՝ վարձի:

## **Որքա՞ն CalFresh գումար կստանամ:**

Դա կախված է տարբեր հանգամանքներից: Երբ Դուք դիմեք, ծրագրի անձնակազմը կխոսի Ձեզ հետ այն մասին, թե քանի մարդ է Ձեզ հետ ապրում և կորոշի, թե որքան CalFresh գումար կստանաք: Հնարավոր է, որ Դուք սննդի համար ամսական մոտ 100 ԱՄՆ դոլար ստանաք:

## **Իսկ ի՞նչ կատեք իմ ընտանիքի մասին:**

Եթե Ձեր ընտանիքն արդեն CalFresh է ստանում, CalFresh ընդհանուր գումարը, որը Դուք և Ձեր ընտանիքն ստանում եք, կարող է ավելանալ կամ պակասել: Հավելյալ տեղեկությունների համար պետք է խոսեք Ձեր ծրագրի անձնակազմի հետ:

## **Ի՞նչ կպատահի, եթե ընտանիքիս նպաստները նվազեն:**

Եթե Ձեր ընտանիքն իրավունակ լինի CalFresh-ի համար նախքան 2019թ. հունիսի 1-ը, իսկ Ձեր SSI գումարը պատճառ դառնա, որ նրանց նպաստները նվազեն, Ձեր ընտանիքը կգնահատվի Լրացուցիչ կամ Փոխանցվող սննդառության նպաստներ կոչվող ծրագրի համար: Սա գումար է այն մարդկանց համար, ովքեր ապրում են մեկի հետ, ով SSI է ստանում, և ովքեր CalFresh ստացել են նախքան SSI ստացողի իրավունակ դառնալը: Եթե SSI ստացողի պատճառով նպաստը նվազում կամ վերանում է, ապա վարչաշրջանները պետք է տնային տնտեսությանը սննդի համար լրացուցիչ գումար տրամադրեն Լրացուցիչ կամ Փոխանցվող սննդառության նպաստներ կոչվող ծրագրի միջոցով:

Լրացուցիչ կամ Փոխանցվող սննդառության նպաստները նախատեսված են միայն այն տնային տնտեսությունների համար, որոնք CalFresh են ստացել նախքան 2019թ. հունիսի 1-ը, ուստի եթե Դուք կարծում եք, որ Ձեր տան անդամները կարող են իրավունակ լինել CalFresh ստանալու և դեռ չեն ստանում, կարող եք ցանկանալ, որ նրանք դիմեն CalFresh-ի համար՝ նախքան 2019թ. հունիսի 1-ը՝ համոզվելու, որ իրավունակ կլինեն այդ ծրագրերից օգտվելու համար:

## **Ինչպե՞ս պետք է դիմեմ:**

Դուք կարող եք դիմել առցանց, հեռախոսով կամ անձամբ:

Առցանց դիմելու համար այցելեք՝

<https://www.getcalfresh.org/?source=cdss>

Ահա այն կայքէջը, վարչաշրջանի գրասենյակի հետ միասին՝  
<http://www.cdss.ca.gov/County-Offices>

Չեռախոսահամարն է՝ 1-877-847-3663

**Ես CAPI եմ ստանում: Որևէ այլ բան կփոխվի՞ ինձ համար:**

Այն մարդիկ, ովքեր CAPI (որը նշանակում է Կանխիկի աջակցման ծրագիր ներգաղթյալների համար (CAPI, Cash Assistance Program for Immigrants)) են ստանում, նաև լրացուցիչ 10 ԱՄՆ դոլար կստանան ամեն ամիս յուրաքանչյուր անհատի համար և 20 ԱՄՆ դոլար՝ CAPI զույգի համար: